

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԼԻԼԻԱ ԶՈՐԻԿԻ ՎԵՐԴՅԱՆ

**ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2016

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում:**

- Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ **Գ. Հ. Հակոբյան**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ **Է. Ի. Այվազյան**
մանկավարժական գիտությունների թեկնածու՝
Լ. Վ. Դանիելյան
- Առաջատար կազմակերպություն՝ **Վ. Բոյուսովի անվան լեզվահասարակա-
գիտական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 14⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. նոյեմբերի 2-ին:

**Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար՝**

մանկավարժական գիտ.թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում իրականացող քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային փոփոխությունները նոր պահանջներ են առաջադրում բարձրագույն կրթությանը, որի կարևոր խնդիրներից են դառնում ոչ միայն ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը, այլև կյանքի արագ փոփոխվող պայմաններին նրանց հարմարման և բուհի կրթական միջավայր արդյունավետ ինտեգրման ապահովումը: Աշխատաշուկայում մրցակցության աճը, նոր տեխնոլոգիաների ներդրումները կրթական համակարգին թելադրում են համաշխարհային չափանիշներին համապատասխան մասնագետի պատրաստում՝ ունակ մասնագիտական մշտական աճի, սոցիալական և մասնագիտական շարժունության, իմացական, հոգևոր, սոցիալական, մշակութային ոլորտներում ներդաշնակ կենսագործունեության: Այս տեսանկյունից կրթության սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր է դառնում կրթական նոր միջավայր անձի ուսումնական և սոցիալ-հոգեբանական ինտեգրումը՝ որպես շրջակա միջավայրում ներդաշնակ կենսագործունեության երաշխիք:

Բարձրագույն դպրոցի համար արդիական այս հիմնախնդրի լուծումը մեծ չափով պայմանավորված է ուսումնառության առաջին շրջանում ուսանողների՝ բուհի կրթական միջավայրում հարմարման գործընթացի արդյունավետ իրականացումից:

Հանրակրթական ոլորտից բարձրագույն կրթության ոլորտ անցումն ուղեկցվում է ուսումնական, սոցիալ-մշակութային, բարոյահոգեբանական բնույթի փոփոխություններով: Ավարտական և միասնական քննությունների շրջանում հոգնածությունը, մասնագիտության ընտրության հետ կապված խնդիրները, հասակակիցների, ընկերների, ուսուցիչների՝ հարազատ դարձած միջավայրից սոցիալական նոր միջավայր անցման հետ կապված հոգեբանական բարդույթները, այդ միջավայրում ինքնահաստատման և ինքնիրացման ձգտումը մեծ լարվածություն են առաջացնում նախկին դպրոցականի մեջ: Ուսումնառության առաջին շրջանում նա պետք է ոչ միայն ընտելանա սոցիալական նոր միջավայրին, այլև հաղթահարի ուսումնական գործընթացում առկա մի շարք դժվարություններ՝ կապված ուսուցման կազմակերպման, վերահսկողության, գնահատման ձևերի ու մեթոդների, մեծածավալ տեղեկատվության յուրացման, ինքնուրույն աշխատանքի պլանավորման և իրականացման հետ: Առաջին կուրսի ուսանողը հայտնվում է իր համար միանգամայն նոր սոցիալ-մշակութային միջավայրում, որում նա պետք է ձևավորի իր սոցիալական կարգավիճակը, դասախոսների և համակուրսեցիների հետ հաստատի միջանձնային հարաբերություններ, ընտելանա ներբուհական միջավայրում ընդունված ավանդույթներին:

Սոցիալական նոր միջավայրում ինտեգրումն ու բնականոն կենսագործունեությունն անձի սոցիալական ակտիվության, մասնագիտական

ինքնորոշման, ուսումնական առաջադիմության բարձրացման և կենսական ներուժի իրացման կարևոր պայման են, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել ինտեգրման գործընթացի բովանդակությունը և օրինաչափությունները, ուսանողական տարիքին բնորոշ անհատական, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, բացահայտել շրջակա միջավայրում օրգանիզմի ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական հարմարման գործոնները, նախանշել և հիմնավորել առաջին կուրսի ուսանողների՝ բուհի կրթական միջավայր արդյունավետ ինտեգրման մանկավարժական պայմանները:

Կենսագործունեության նոր միջավայր ինտեգրման և այդ համատեքստում սոցիալ-մշակութային նոր պայմաններին հարմարման գործընթացի ուսումնասիրմանը գիտական նշանակալի հետազոտություններ են նվիրվել: Այնուհանդերձ, չնայած հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ գիտահետազոտական ուշագրավ արդյունքներին և առանձին տեսանկյունների խոր լուսաբանմանը, խորությամբ ուսումնասիրված չեն ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման, այդ միջավայրում սոցիալ-հոգեբանական և ուսումնական հարմարման գործընթացի մեթոդաբանական հիմքերը, հանրակրթության ոլորտից բարձրագույն կրթության ոլորտ շարունակական և սահուն անցման հոգեբանամանկավարժական և կազմակերպամեթոդական պայմանները: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի բովանդակային և գործնական կողմերի գիտամեթոդական ապահովման և արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանների նախանշման անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է բացահայտել, տեսականորեն և գործնականում հիմնավորել ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների արդյունավետ ինտեգրման մանկավարժական պայմանները:

Հետազոտության խնդիրները.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականության, հետազոտության հիմնախնդրին նվիրված սոցիոլոգիական, մշակութաբանական, կենսաբանական տեսությունների ու հայեցակարգերի վերլուծության հիման վրա մեկնաբանել հետազոտության հիմնախնդրին առնչվող առանցքային հասկացությունները:

2. Նախագծել ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մանկավարժական մոդելը:

3. Իրականացնել սոցիարցումներ և ստացված տվյալների վերլուծության հիման վրա բացահայտել ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում առկա ուսումնական, սոցիալական, հոգեբանական բնույթի դժվարությունները:

4. Նախանշել ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման և այդ համատեքստում հարմարման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

5. Առաջարկել բուհի կրթական միջավայր ինտեգրմանը նպաստող մանկավարժական ներգործության արդյունավետ մեթոդներ, միջոցներ և ձևեր, հիմնավորել դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Հետազոտության գիտական նորոյթը.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիոլոգիական, մշակութաբանական, կենսաբանական տեսանկյուններից մեկնաբանվել և համակարգվել են շրջակա միջավայր անձի ինտեգրման վերաբերյալ առանցքային հասկացությունները:

2. Ուսումնասիրվել է ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ինտեգրման գործընթացում ուսանողների սոցիալ-մշակութային, հոգեբանական և ուսումնական հարմարման հիմնախնդիրը:

3. Նախագծվել է բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մանկավարժական մոդելը, առաջադրվել են ինտեգրման գործընթացում մանկավարժական ներգործության նպատակահարմար մեթոդներ, միջոցներ ու ձևեր:

4. Որոշվել են բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Վերլուծվել և համակարգվել են բուհի կրթական միջավայր ուսանողների ուսումնական և սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ տեսություններն ու հայեցակարգերը:

2. Որոշվել են ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի բովանդակությունը, աշխատանքի հիմնական ուղղությունները, ինտեգրման մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները:

3. Տեսականորեն հիմնավորվել են բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի արդյունավետ իրականացման մեթոդները, միջոցներն ու ձևերը:

4. Հիմնավորվել է ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում կուրսդեկի մանկավարժական աջակցության նպատակահարմարությունը, բնութագրվել են նրա դերն ու գործառույթները բուհի կառավարման համակարգում:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի տեսական և գործնական հետազոտության նյութերը կարող են օգտակար լինել ոչ միայն բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ուսանողների ինտեգրման, այլև սոցիալ-մշակութային տարբեր խմբերում անձի սոցիալական հարմարման և միջմշակութային հաղորդակցման գործընթացներում:

2. Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել դպրոց-բուհ համագործակցության պրակտիկայում, դպրոցականների մասնագիտական կողմնորոշումների ձևավորման, ինչպես նաև կրթության բնագավառի մասնագետների վերապատրաստման և սոցիալ-մշակութային կոմպետենցիաների զարգացման

գործընթացներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրումը ուսումնական գործունեության արդյունավետ իրականացման կարևոր պայման է, որում էական նշանակություն ունի մանկավարժական նպատակաուղղված ներգործությունը՝ համապատասխան մանկավարժական պայմանների ապահովմամբ:

2. Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մանկավարժական մոդելը ներառում է այդ գործընթացի բովանդակությունը, նպատակը, խնդիրները, բաղադրատարրերը, աշխատանքի ուղղությունները, ինտեգրման գործընթացի արդյունավետության գնահատման չափանիշները, ուսանողների ինտեգրման մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները, ախտորոշիչ գործիքակազմը, արդյունքների վերլուծությունը, արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները, մանկավարժական ներգործության մեթոդները, միջոցներն ու ձևերը:

3. Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրմանը նպատակաուղղված աշխատանքներն իրականանում են ըստ ուսումնական, սոցիալ-մշակութային, հոգեբանական, մասնագիտական ուղղությունների:

4. Բուհի կրթական միջավայր ուսանողների ուսումնական ինտեգրումը բնորոշվում է ուսումնական աշխատանքի կազմակերպման նոր ձևերի ու պահանջների յուրացմամբ, կրթամշակութային նոր պայմաններում ապագա մասնագիտության հիմունքների տիրապետմամբ: Սոցիալ-հոգեբանական ինտեգրումն անձի՝ սոցիալական նոր միջավայրում հարմարման և դրական փոխհարաբերությունների ձևավորման գործընթաց է:

5. Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում մանկավարժական ներգործության նպատակահարմար մեթոդները, միջոցներն ու ձևերը բխում են ուսանողակենտրոն մոտեցման առանցքային դրույթներից:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը ներառում է 14 աղյուսակ, 16 գծապատկեր: Այն բաղկացած է համակարգչային 137 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի գիտատեսական հիմնավորումը**» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «**Շրջակա միջավայր ինտեգրման**

գործընթացի առանցքային հասկացությունների մեկնաբանումը» ենթազվիսում ներկայացվել են «ինտեգրում» «հարմարում», «սոցիալականացում» հասկացությունների մեկնաբանման վերաբերյալ փիլիսոփայական, սոցիոլոգիական, մշակութաբանական, մանկավարժահոգեբանական մոտեցումներ, հիմնավորվել է, որ շրջակա միջավայրում անձի ինտեգրման և հարմարման գործընթացները դիտարկվում են սոցիալականացման համատեքստում: Երկրորդ՝ **«Անձի սոցիալ-հոգեբանական հարմարումը շրջակա միջավայր ինտեգրման համատեքստում»** խորագրով ենթազվիսում դիտարկվել են անձի սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ հայեցակարգային մի շարք դրույթներ: Մասնավորապես մեկնաբանվել են հարմարման փուլերն ըստ Ա. Վ. Պետրովսկու, հարմարման՝ Է. Էրիքսոնի կողմից բնութագրված ոճերը, Ա. Նալչաջյանի կողմից արված դասակարգումն անձի դրոպայատճանների և պահանջմունքների վերլուծության հիման վրա, հարմարման՝ Օ. Ի. Ջոտովայի կողմից բնութագրված մակարդակները: Հիմնավորվել է, որ հարմարումն անձի կողմից վարքի նոր ձևերի դրսևորման և գործունեության իրականացման բարդ գործընթաց է միջավայրի հետ հավասարակշռված և ներդաշնակ համակեցության պահպանման համար: Բնութագրվել են հարմարման գործընթացի բաղադրատարրերը: Երրորդ՝ **«Ուսանողների ուսումնական, սոցիալ-մշակութային և հոգեբանական հարմարման հիմնախնդիրը բուհի կրթական միջավայր ինտեգրման գործընթացում»** խորագրով ենթազվիսում նվիրված է ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրմանն ու այդ միջավայրում հարմարմանը, որն ուղեկցվում է մի շարք հակասություններով ու ճգնաժամով: Ուշ պատանեկան տարիքի ճգնաժամին նվիրված հետազոտությունների հիման վրա հիմնավորվել է, որ այս տարիքին բնորոշ են աշխարհայացքի, արժեքների փոփոխությունը, իմացական ակտիվությունը, ինքնահաստատման պահանջմունքը, միաժամանակ նաև տագնապայնությունն ու անվստահությունը, որոնք առավել ընդգծված են դրսևորվում նոր միջավայր ինտեգրման գործընթացում: Բնութագրվել են ուսումնառության առաջին շրջանում առկա դժվարությունները, որոնք ի հայտ են բերում ֆիզիոլոգիական, կենսաբանական, սոցիալ-մշակութային, հոգեբանական բազմաթիվ գործոններ՝ փոփոխություններ առաջացնելով ուսանողների վարքի և գործունեության մեջ: Մեկնաբանվել են տվյալ միջավայրում ինտեգրման և հարմարման՝ միմյանց հաջորդող փուլերի ու շրջանների, օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների, ինչպես նաև դպրոցից բուհ սահուն անցման խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ ուշագրավ տեսակետներ: Բնութագրվել են ինտեգրման գործընթացի վրա ազդող երեք խումբ գործոններ՝ *սոցիալական, հոգեբանական, մանկավարժական*: Ինտեգրման գործընթացում առանձնացվել և բնութագրվել են *ուսումնական, սոցիալ-մշակութային, հոգեբանական, մասնագիտական* ուղղությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների արդյունավետ ինտեգրման մանկավարժական պայմանները»** խորագրով գլուխը բաղկացած է երկու

ենթագլխից: Երկրորդ գլխի առաջին՝ «**Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մանկավարժական մոդելը**» վերնագրով ենթագլխում բնութագրվել են մոդելի բաղադրիչները. բովանդակությունը՝ *տեղեկատվական, գիտամեթոդական, գործնական* բաղադրատարրերով, նպատակը, խնդիրները, *ուսումնական, սոցիալ-մշակութային, հոգեբանական, մասնագիտական* ուղղությունները, օրինաչափությունները: Սահմանվել են ինտեգրման գործընթացի արդյունավետության գնահատման չափանիշները, ուսանողների ինտեգրման մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները, ախտորոշիչ գործիքակազմը, արդյունքների վերլուծությունն ու եզրահանգումները, ինտեգրման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները, մանկավարժական ներգործության մեթոդները, միջոցներն ու ձևերը: Երկրորդ՝ «**Բուհում ուսումնառության առաջին շրջանում ուսանողների ինտեգրման վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը**» վերնագրով ենթագլխում ներկայացվել են հիմնախնդրի վերաբերյալ իրականացված սոցիոլոգիական հարցումների ուսումնասիրության արդյունքները: Հարցումների նպատակն է եղել ուսումնասիրել ուսումնառության առաջին շրջանում ինտեգրման հետ կապված տարաբնույթ դժվարությունները, բացահայտել ուսանողների վերաբերմունքը կրթական նոր միջավայրի, ուսուցման կազմակերպման ձևերի, դասախոս-ուսանող փոխգործակցության, միջանձնային փոխհարաբերությունների վերաբերյալ:

Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են Հայաստանում ֆրանսիական համալսարանի «Բանկային գործ և ապահովագրություն» ֆակուլտետի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի «Էներգետիկական» ֆակուլտետի, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Պատմություն և իրավագիտություն», «Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն» ֆակուլտետների 400 ուսանողների շրջանում:

Շտազոտությունն անցկացվել է մինչհարցումային (դիտումների և զրույցների միջոցով պարզել ուսումնառության առաջին ամիսների ընթացքում ուսանողների ընդհանուր ակտիվությունը, միջանձնային փոխհարաբերությունների, հաղորդակցման բնույթը և այլն), հարցումային և հարցման տվյալների մշակման ու վերլուծության փուլերով:

Հարցումներն անցկացվել են ըստ մեր կողմից մշակված հարցաթերթիկների և ամփոփիչ թեստի: Իրականացվել են նաև հարցումներ սոցիալ-ժողովրդագրական բնույթի տվյալներ ստանալու համար(սեռերի բաշխվածություն, բնակավայր, ընտանեկան դրություն, բնակության պայմաններ և հանգամանքներ, համատեղում այլ զբաղվածության հետ, մինչբուհական կրթություն և այլն), որոնք ևս կարևորվել են նոր միջավայրում արդյունավետ ինտեգրման տեսանկյունից:

«Նշե՛ք ուսումնառության առաջին շրջանում Ձեր ունեցած ուսումնական բնույթի դժվարությունները» հարցադրմամբ ուսումնասիրվել են ուսանողների՝ ուսումնական բնույթի դժվարությունները, որոնց արդյունքները տոկոսային

արտահայտությամբ ներկայացված են ստորև:

Գծապատկեր 1.
Ուսումնառության առաջին շրջանում ուսումնական բնույթի դժվարությունները




Ստացված տվյալների առավելությամբ առանձնանում են «Սկզբնաղբյուրներով աշխատանքը (այդ թվում էլեկտրոնային)»՝ 29,40%, և «Ուսումնական ծավալուն տեղեկատվության յուրացումը, համակարգումը»՝ 24,34% պատասխանները: 13,10% հարցվածներ նշել են «Ինքնուրույն աշխատանք իրականացնելու ոչ բավականաչափ ձևավորված կարողությունները», որն արտահայտում է դպրոցում և բուհում ինքնուրույն աշխատանքի առումով ուսումնական գործունեության իրականացման որոշ տարբերություններ: Մտահոգիչ է նաև 11,08% հարցվածների կողմից նշված «Մասնագիտության ընտրության դրդապատճառների անորոշությունը, բուհական ուսումնառությանը հոգեբանական ոչ բավականաչափ պատրաստությունը» պատասխանի տարբերակը, որը հավաստում է մեր իրականության մեջ հաճախադեպ հանդիպող փաստը՝ մասնագիտության պատահական, ոչ նպատակադրված ընտրությունը:

«Նշե՞ք ուսումնառության առաջին շրջանում Ձեր ունեցած սոցիալական բնույթի դժվարությունները» հարցադրմամբ ուսումնասիրվել են ուսանողների՝ սոցիալական ուղղվածություն ունեցող դժվարությունները, որոնք արտահայտված են համապատասխան գծապատկերում:

Գծապատկեր 2.

Ուսումնառության առաջին շրջանում ուսանողների սոցիալական բնույթի դժվարությունները




Պատասխանները ցույց են տալիս, որ առավելագույն թվով ուսանողներ՝ 35,5%-ը, դժվարություններ են կրում նոր կոլեկտիվ ինտեգրման գործընթացում: Սոցիալական նոր միջավայրում ընդունված նորմերին ու կանոններին դժվարությամբ են հարմարվում 30,5% հարցվածներ: «Կենցաղի կազմակերպում և նոր կենսաոլիթի հարմարում» պատասխանի տարբերակն ընտրել են 24% հարցվածներ: Ըստ էության սոցիալական բնույթի այդ դժվարությունը բխում է այն հանգամանքից, որ բացի Հայաստանի ֆրանսիական համալսարանում սովորող և հարցմանը մասնակցած ուսանողներից, որոնց մեծամասնությունը բնակվում է մայրաքաղաքում, այլ բուհերի հարցված ուսանողների շրջանում գերակշռում են ՀՀ մարզերից եկած ուսանողները, որոնք դժվարություններ են կրում կենցաղի կազմակերպման և սոցիալական այլ հարցերում:

«Նշե՞ք ուսումնառության առաջին շրջանում առկա հոգեբանական բնույթի դժվարությունները» հարցին տրված պատասխանների արդյունքները ներկայացված են հետևյալ գծապատկերում.

Գծապատկեր 3.

Ուսումնառության առաջին շրջանում ուսանողների հոգեբանական բնույթի դժվարությունները



Պատասխանների վերլուծությունը բացահայտում է, որ հարցվածների 39%-ը դժվարություններ է կրում դասախոսների հետ հաղորդակցման և դրական փոխհարաբերությունների ձևավորման ընթացքում, համակուրսեցիների և այլ ուսանողների հետ հաղորդակցման գործընթացում հոգեբանական բնույթի դժվարություններ են կրում 29,25% հարցվածներ: Ռիսկային խմբում են «հուզական ապրումներ՝ կապված դպրոցից և համադասարանցիներից հեռանալու հետ» պատասխանի տարբերակն ընտրած 26,25% հարցվածներ. բնականաբար, այդ ապրումները չհաղթահարելու դեպքում նրանք կունենան առավել խոր հոգեբանական խնդիրներ: Ուշադրություն է դարձվել նաև այն հանգամանքին, որ 5,5% հարցվածներ չեն պատասխանել. դա ևս որոշ չափով վկայում է հոգեբանական բնույթի ինչ-ինչ հանգամանքների մասին:


«Նշե՞ք՝ ուսումնառության առաջին շրջանում ումից եք ակնկալում ուսումնական և սոցիալ-մանկավարժական աջակցություն» հարցին տրված պատասխանները բացահայտում են, որ ուսումնառության առաջին շրջանում ուսանողների 22,3%-ը ուսումնական և սոցիալ-մանկավարժական աջակցություն է ակնկալում կուրսղեկից, 17,1%-ը՝ տվյալ ֆակուլտետի ղեկանից, ղեկանատի աշխատակիցներից, դասախոսներից: Դա բացատրվում է նրանով, որ դպրոցում նրանք աջակցություն են ստացել դասղեկից, փոխտնօրեններից, ուստի և նմանօրինակ աջակցություն են ակնկալում նաև բուհում: Ընդամենը հարցվածների 12,3%-ը աջակցություն է ակնկալում համակուրսեցիներից, 11,5%-ը՝ բարձր կուրսերի ուսանողներից, 9,7%-ը՝ ծնողներից, ընկերներից: Տվյալներն ընդհանուր առմամբ հավաստում են, որ ուսանողներն ունեն օգնության կարիք՝ բուհում ինտեգրվելու և փոխգործակցության միջավայր ձևավորելու համար:

Ակնհայտորեն ուսումնառության առաջին շրջանում ուսանողների՝ բուհ ինտեգրման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նաև ապագա մասնագիտության ընտրության դրդապատճառների ձևավորվա-

ծուխամբ: Առաջարկված հարցաթերթիկը՝ «Նշե՞ք, թե որ գործոններն են պայմանավորել Ձեր ապագա մասնագիտության ընտրությունը» բովանդակությամբ, բացահայտել է հետևյալ պատկերը.

Գծապատկեր 4.

Մասնագիտության ընտրության դրդապատճառների վրա ազդող գործոններ



Տոկոսային առավելությամբ առանձնանում են «սերն ու հետաքրքրությունն ապագա մասնագիտության նկատմամբ»՝ 24,25%, և «բարձրագույն կրթության վկայական ստանալու և բարձր վարձատրվող աշխատանք գտնելու հեռանկարը»՝ 20,25% պատասխանները: «Ընտանեկան ավանդույթները, ծնողների խորհուրդը» պատասխանն ընտրել են 13,75% հարցվածներ: Որոշ չափով մտահոգիչ են «ընկերների օրինակը»՝ 8,5%, և «պատահական ընտրություն, որոշակի գործոններ չեն եղել» պատասխանները՝ 6% ցուցանիշով, որը վկայում է մասնագիտության ընտրության դրդապատճառների՝ ոչ բավականաչափ ձևավորվածության մասին և հիմնախնդրային է հետազոտության թեմայի շրջանակներում:

Բուհ արդյունավետ ինտեգրման գործընթացում կարևոր նշանակություն ունի ուսումնական աշխատանքի տարբեր ձևերին տիրապետման կարողությունը: «Ուսանողների՝ ուսումնական գործունեություն իրականացնելու կարողությունները» բովանդակությամբ հարցաթերթիկին տրված պատասխանների վերլուծությունը փաստում է, որ ուսումնառության առաջին շրջանում ուսանողներն առավելապես դժվարանում են ուսումնական աշխատանքի տարբեր ձևերում: Այսպես, օրինակ, դասախոսության գրառման, ինտերակտիվ քննարկումների և լսարանում ուսումնական նյութի ընկալման առումով ընդհանուր առմամբ դժվարություններ են կրում հարցված ուսանողների 61,25%-ը, սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքներին կարողանում է ինքնուրույն նախապատրաստվել հարցվածների 47,25%-ը, միջանկյալ ստուգումներին և կիսամյակային քննություններին՝ 26,25%-ը: Ուսումնական

տեղեկատվությունն ինքնուրույն որոնում, համակարգում, յուրացնում են ընդամենը 24,5% հարցվածներ, մասամբ դժվարանում է հարցվածների 58,75%-ը: Այս ուղղությամբ մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսումնական աշխատանքի որոշ ձևերում դժվարությունները բխում են հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում ուսումնական գործունեության իրականացման ձևերի միջև առկա որոշ տարբերություններից: Հարցված ուսանողների 34%-ը նախընտրում է ընթացիկ ստուգումներին նախապատրաստվել ըստ դասախոսությունների կամ 1-2 հիմնական դասագրքի ու ձեռնարկի միջոցով՝ խուսափելով լրացուցիչ գրականությունից: Ակնհայտ է, որ ուսումնառության առաջին շրջանում ուսանողները կարիք ունեն տեխնոլոգիական և տեղեկատվական աջակցության, և, ըստ մեր դիտարկումների, բուհի տեղեկատվական ռեսուրսներից լայնորեն օգտվելու պարագայում ուսանողներն առավել արդյունավետ կարող են ինտեգրվել բուհի կրթական միջավայր՝ հաղթահարելով ուսումնական բնույթի դժվարությունները:

«Ուսանողների վերաբերմունքը ներբուհական կյանքի վերաբերյալ»

բովանդակությամբ հարցաթերթիկին տրված պատասխանների վերլուծությունը բացահայտում է որոշ ուշագրավ տվյալներ հետազոտության հիմնախնդրի շրջանակներում: Այսպես, օրինակ, ուսանողների 42,75 %-ը լիարժեքորեն հարմարված չէ բուհում ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերին, 45,5%-ին չեն բավարարում բուհի տեխնոլոգիական հագեցվածությունը, էլեկտրոնային ռեսուրսների մատչելիությունը: Դասախոսների հետ հաղորդակցման բնույթից գոհ են ընդամենը 35,75% հարցվածներ, ներխմբային և միջանձնային հարաբերությունների բնույթը բավարար է համարում հարցվածների 34,5%-ը, բուհի մշակութային կյանքի, կազմակերպված միջոցառումների վերաբերյալ գոհունակություն է արտահայտել հարցվածների ընդամենը 40,5%-ը: Հարցմանը զուգահեռ անցկացված զրույցներն ընդհանուր առմամբ բացահայտել են արտահայտված վերաբերմունքի պատճառները. նշվել են հուզական լարվածությունը, հոգեբանական խոչընդոտները ներխմբային հարաբերություններում և դասախոսների հետ հաղորդակցման ընթացքում:


Ներխմբային հարաբերությունների բնույթն ուսումնասիրելու համար տրված **«Գնահատեք, խնդրեմ, ներխմբային փոխհարաբերությունների բնույթը՝ ընդգծելով Ձեր նախընտրած պատասխանը»** վերնագրով հարցաթերթիկին տրված պատասխաններն արտահայտում են ուսումնառության առաջին շրջանում ներխմբային հարաբերությունների բնույթը: Տվյալները ցույց են տալիս, որ թեև «ներխմբային բախումնային իրավիճակների առկայությունը» ցածր ցուցանիշ է արձանագրել՝ 16%, այնուհանդերձ հարցվածների 51%-ը ներխմբային հետաքրքրություններ չի տեսնում, իսկ 53,75%-ը համամիտ չէ, որ ձևավորվել է համախմբված կոլեկտիվ: Մտահոգիչ է այն, որ 9,5% հարցվածներ ընդհանրապես չեն պատասխանել, որը ներխմբային հարաբերությունների վերաբերյալ որոշակի դիրքորոշում չի արտահայտում:

«Բուհի կրթական միջավայր ինտեգրման գործընթացում աշխատանքի ո՞ր ձևերը, միջոցներն եք համարում առավել արդյունավետ» հարցադրման

նպատակն է պարզել, թե ուսանողները մանկավարժական ներգործության աշխատանքների որ ձևերը, միջոցներն են նախընտրում:

Գծապատկեր 5.

Բուհ ինտեգրման գործընթացում աշխատանքի ձևերն ու միջոցներն ըստ ուսանողների նախընտրության



Տվյալների վերլուծությունը բացահայտում է, որ առաջադրված տարբերակներից ցուցանիշային առավելությամբ առանձնացել են «թրեմինգը»՝ 19,5%, «անհատական խորհրդատվությունները»՝ 16,25%, «բանավեճերը»՝ 13,5%, «ստեղծագործական առաջադրանքները»՝ 10,25%: Հարցաթերթիկը միաժամանակ տեղեկատվական բնույթ ունի, քանի որ ուսանողները պատկերացում են կազմել աշխատանքների ձևերի ու միջոցների մասին:

Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մակարդակը որոշելու համար անցկացվել է թեստավորում՝ ըստ բարձր, միջին, ցածր մակարդակները բնութագրող չափանիշների, որոնք ներկայացված են ատենախոսության 2.1 ենթագլխում: Թեստավորման արդյունքների մշակմամբ հետազոտության շրջանակներում բացահայտվել են ուսումնառության առաջին շրջանում ուսանողների՝ բուհ ինտեգրման բարձր՝ 26,75%, միջին՝ 42,25% և ցածր՝ 31% ցուցանիշները:

Սոցիոլոգիական հարցումների, թեստավորման, դիտումների, զրույցների արդյունքների վերլուծության արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

- ✓ Ուսումնառության առաջին շրջանում գերակշռում են բուհի կրթական միջավայր ինտեգրման միջին և ցածր մակարդակները, որը հավաստում է հետազոտության հիմնախնդրի կարևորությունը և լուծման անհրաժեշտությունը:
- ✓ Բուհի կրթական միջավայր ինտեգրման գործընթացում անհրաժեշտ մանկավարժական ներգործության վերաբերյալ ուսանողները բավականաչափ իրազեկված չեն:
- ✓ Ուսանողներն էական դժվարություններ են կրում ուսումնական, սոցիալ-հոգեբանական առումներով, սակայն նրանք չեն կողմնորոշվում, թե բուհական

համակարգում որ կառուցներն են պատասխանատու ուսումնառության առաջին շրջանում իրենց աջակցելու համար:

✓ Ուսանողները համամիտ են, որ ինտեգրման գործընթացում կիրառվեն մանկավարժական ներգործության ձևեր, միջոցներ, սակայն դժվարանում են ընտրություն կատարել դրանց միջև:

✓ Ուսանողների բացարձակ մեծամասնությունը համամիտ է, որ բուհի կրթական միջավայր արդյունավետ ինտեգրումը ուսումնառության ընթացքում հաջողությունների երաշխիք է:

Ատենախոսության երրորդ՝ **«Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում մանկավարժական ներգործության գիտագործնական հիմնավորումը»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Երրորդ գլխի առաջին՝ **«Բուհի ինտեգրման գործընթացում մանկավարժական ներգործության աշխատանքների բովանդակությունը»** ենթագլխում ներկայացվել են աշխատանքի փուլերը, յուրաքանչյուր փուլի բովանդակությունն ու խնդիրները, աշխատանքի ուսումնական, հոգեբանական, սոցիալ-մշակութային և մասնագիտական ուղղությունները՝ իրականացման մեթոդների, միջոցների ձևերի նախանշամբ, ինչպես նաև մշակված աշխատանքային պլանը՝ բովանդակության, ժամկետների և պատասխանատուների սահմանմամբ: Երրորդ գլխի երկրորդ՝ **«Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ինտեգրմանն ուղղված աշխատանքների իրականացումը»** ենթագլուխը նվիրված է մանկավարժորեն նպատակահարմար աշխատանքի այն մեթոդների, միջոցների ու ձևերի բնութագրմանը, գործնականում կիրառմանն ու հիմնավորմանը որոնք առաջարկվել են տեսական հետազոտության և սոցիարցումների արդյունքների վերլուծության հիման վրա: Կարևորվել է անհատական քարտ-թերթիկների հիման վրա ուսանողների բնութագրերի ստեղծումը՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկություններն ու աշխատանքներին մասնակցության դրդապատճառները: Ինտեգրման գործընթացում որպես աշխատանքի արդյունավետ մեթոդներ են դիտվել արդիական հնչեղություն ունեցող և երկխոսության տրամադրող գրույցները, առաջարկվել են գրույցների, բանավեճերի, ինտերակտիվ քննարկումների թեմաներն ու աշխատանքի արդյունավետ իրականացման պայմանները: Հատկապես նպատակահարմար են դիտվել թրենինգները, դերախաղերը, գործնական խաղերը, ստեղծագործական առաջադրանքները, ներկայացվել են պարապմունքների նմուշօրինակներ՝ ուշագրավ թեմատիկայով: Ուսումնական, սոցիալ-հոգեբանական հարմարման, լարվածության թուլացման, հաղորդակցական բարդոյթների հաղթահարման արդյունավետ ձևեր, միջոցներ են դիտվել անհատական խորհրդատվությունները ուսանողներին հուզող տարբեր հարցերի շուրջ, անհատական օրագրերի վարումը, խմբային քննարկումները, բանավեճերը, անհատական և խմբային նախագծերը, թեմատիկ սեմինարները, դիտարկվել են դրանց իրականացման կազմակերպամեթոդական տեսանկյունները: **Երրորդ գլխի երրորդ՝ «Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման**

գործընթացում կուրսղեկի դերի և գործառույթների գիտագործնական հիմնավորումը» ենթագլխում հիմնավորված է կուրսղեկի գործունեությունը՝ որպես ուսումնառության առաջին շրջանում ուսանողների ինտեգրման գործընթացի արդյունավետ իրականացման ձև: Ներկայացվել են բուհի կառավարման համակարգում կուրսղեկի գործունեության վերաբերյալ բազմատեսանկյուն դիտարկումներ, հետազոտության հիմնախնդրի շրջանակներում հիմնավորվել են կուրսղեկի դերն ու աշխատանքի նշանակությունը: Բնութագրվել են կուրսղեկի գործունեության մոդելները, մակարդակները, կազմակերպամանկավարժական ուղղությունները, *տեղեկատվական, կազմակերպական, հաղորդակցական, վերահսկողության, պլանավորման* գործառույթները: Նախանշվել են բուհ ինտեգրման գործընթացում ուսանողական կոլեկտիվի ձևավորման ուղղությամբ կուրսղեկի գործունեության փուլերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրումը սոցիալ-մշակութային նոր միջավայրում ուսումնական գործունեության իրականացման և նոր հարաբերությունների ձևավորման գործընթաց է, որում առանձնանում են ուսումնական, սոցիալ-մշակութային, հոգեբանական և մասնագիտական ուղղությունները:

2. Բուհի կրթական միջավայր ուսանողների ուսումնական և սոցիալ-հոգեբանական արդյունավետ ինտեգրման չափանիշներն են հաղորդակցման և սոցիալական շփումների պահանջումքների ձևավորվածությունը, սոցիալ-մշակութային նոր միջավայրում հոգեբանական հարմարավետությունն ու կոլեկտիվում ընդունված լինելու զգացումը, ուսումնական գործունեության նոր ձևերին տիրապետումը:

3. Ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում մանկավարժական ներգործության նպատակահարմար մեթոդների, միջոցների ու ձևերի ընտրությունը պետք է բխի ուսանողակենտրոն մոտեցման առանցքային դրույթներից՝ նոր կենսամիջավայրում հարմարման գործընթացում ուսանողների տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունների, կրթական և հաղորդակցական պահանջումքների հաշվառման սկզբունքների հիման վրա:

4. Բուհ ինտեգրման գործընթացի արդյունավետությունը մեծ չափով կախված է դասախոսների անձնային և մասնագիտական որակներից, մանկավարժական տակտից և սոցիալ-մշակութային կոմպետենցիաների ձևավորվածությունից, հաղորդակցման ճկուն, ըստ իրավիճակի ոճերի տիրապետման հմտություններից՝ ուսանողի անձի նկատմամբ հարգանքի, մարդասիրության, հանդուրժողականության գաղափարների գերակայությամբ:

5. Ուսումնառության առաջին շրջանում ուսանողների՝ բուհ ինտեգրմանը նպաստող նպատակաուղղված ձև է կուրսղեկի գործունեության

գիտագործնական հիմնավորումը, հիմնական ուղղությունների որոշումը, դերի և գործառույթների իմաստավորումը բուհի կառավարման համակարգում:

6. Բուհի կրթական միջավայր ինտեգրման վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների տվյալների վերլուծությունը, արդյունքների ամփոփումն ու իմաստավորումը հավաստում են հետազոտության հիմնախնդրի կարևորությունը, այդ գործընթացում բուհի կառավարման համապատասխան ենթակառուցվածքների գործունեության փոխհամաձայնեցման և համակարգման ուղիով մանկավարժական ներգործության նպատակային ծրագրերի մշակման անհրաժեշտությունը:

7. Հիմք ընդունելով տեսական և գործնական հետազոտության տվյալները՝ սահմանվել են բուհի կրթական միջավայր ուսանողների արդյունավետ ինտեգրման **մանկավարժական պայմանները**

- ուսումնառության առաջին շրջանում բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման մանկավարժական մոդելի նախագծումը, մանկավարժական ներգործության աշխատանքների բովանդակության որոշումը և ինտերակտիվ հաղորդակցական միջավայրում արդյունավետ մեթոդների, միջոցների, ձևերի կիրառումը,

- բուհի սոցիալ-մշակութային կյանքի բոլոր ոլորտներում, լսարանային և արտալսարանային բազմաբնույթ գործունեության ձևերում, ուսանողական ինքնակառավարման մարմիններում, հասարակական կառույցներում ուսանողների ներգրավումը, միջանձնային փոխհարաբերություններում «սուբյեկտ- սուբյեկտ» հաղորդակցման ճկուն ձևերի կիրառումը,

- ուսումնառության առաջին շրջանում ուսանողների հուզական և բարոյահոգեբանական վիճակի, ֆիզիկական և հոգեբանական լարվածության, ուսումնական ծանրաբեռնվածության, ուսանողական կոլեկտիվում միջանձնային հարաբերությունների ձևավորման շարունակական վերահսկողությունն ու մշտադիտարկումը,

- բուհի տեղեկատվական, հեռահաղորդակցական ռեսուրսների մատչելիության և հասանելիության, ուսումնական խորհրդատվական աջակցության ապահովումը ուսումնահետազոտական ինքնուրույն գործունեության իրականացման գործընթացում,

- բուհի կառավարման համապատասխան ենթահամակարգերի գործունեության մեջ հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ ընթացակարգերի որոշումը՝ ներառյալ դպրոց-բուհ համագործակցության և ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշումների ձևավորման գործընթացների կառավարման մոդելների համատեղ նախագծումն ու մշակումը, դպրոցի և բուհի համապատասխան կառույցների համագործակցության հեռանկարային ուղղությունների որոշումը՝ կրթական աստիճանների շարունակականության ու սահուն անցման մեթոդաբանական հիմնավորմամբ,

- բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում կուրսղեկի գործունեության՝ արդիականության տեսանկյունից իմաստավորումը՝ գիտագործնական համարժեք հիմնավորմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Վերոյան Լ. Ջ., Ուսանողների հարմարման գործընթացի բովանդակային բաղադրատարրերը, ուղղությունները, արդյունավետության գնահատման չափանիշները, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, -Եր.: «Մանկավարժ» հր., 2013, էջ 398-401:

2. Վերոյան Լ. Ջ., Ուսանողների սոցիալ-հոգեբանական և ուսումնամասնագիտական հարմարման հիմնախնդիրը բուհում, «Մանկավարժական միտք» հանդես, -Եր.: «Ձանգակ» հր., 2014, 1-2, էջ 57-61:

3. Վերոյան Լ. Ջ., Անձի սոցիալ-մանկավարժական և հոգեբանական հարմարման մեկնաբանումը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Կրթության արդիականացումը ժամանակակից մանկավարժական հարացույցերի համատեքստում» (Модернизация образования в контексте современных педагогических парадигм) խորագրով միջազգային գիտական համաժողովի նյութերի ժողովածու, -Եր.:Изд-во АГПУ, Артагерс, 2014, էջ 277-281:

4. Վերոյան Լ. Ջ., Բուհի կրթամշակութային միջավայրին ուսանողների արդյունավետ ինտեգրման տեսական-մեթոդաբանական հարցեր, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, -Եր., 2014, 3-4, էջ 29-32:

5. Վերոյան Լ. Ջ., Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացի սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները, «Մանկավարժական միտք» հանդես, -Եր.: «Ձանգակ» հր., 2015, 1-2, էջ 103-108:

6. Վերոյան Լ. Ջ., Բուհի կրթական միջավայրում ուսանողների ինտեգրման գործընթացում կուրատորի դերի և գործառույթների գիտամեթոդական հիմնավորումը, «Մանկավարժական միտք» հանդես, -Եր.: «Ձանգակ» հր., 2016, 1-2, էջ 54-57:

**ВЕРДЯН ЛИЛИЯ ЗОРИКОВНА
ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ИНТЕГРАЦИИ СТУДЕНТОВ
В ОБРАЗОВАТЕЛЬНУЮ СРЕДУ ВУЗА**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-«Теория и история педагогики».

Защита диссертации состоится 2-го декабря 2016 года в 14⁰⁰ ч. на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Политические, экономические, социально-

культурные изменения, происходящие в современном мире, предъявляют новые требования к высшему образованию, одной из важнейших задач которого является не только формирование профессиональной компетенции студентов, но и обеспечение их адаптации к быстро меняющимся условиям жизни и эффективной интеграции в образовательную среду вуза.

Переход от сферы общего образования к высшему образованию сопровождается учебными, социально-культурными, психологическими и изменениями другого характера. В первый период обучения студент должен не только привыкнуть к новой социальной среде, но и преодолеть ряд проблем, которые обнаруживаются в учебном процессе. Интеграция и нормальная жизнедеятельность в новой социальной среде являются важнейшими условиями социальной активности, повышения учебной работоспособности и реализации жизненного потенциала личности.

Актуальность исследования обуславливается необходимостью установки педагогических условий эффективного осуществления содержательной и практической сторон научно-методического обеспечения процесса интеграции студентов в образовательную среду вуза.

Цель исследования: раскрыть, теоретически и практически обосновать педагогические условия эффективной интеграции студентов в образовательную среду вуза на начальном этапе обучения.

Задачи исследования:

1. На основе анализа философской, психолого-педагогической литературы, а также социологических, культурологических, биологических теорий и концепций, посвященных проблеме исследования истолковать ключевые понятия, касающиеся основной проблеме исследования.
2. Спроектировать педагогическую модель интеграции студентов в образовательную среду вуза на первых этапах обучения.
3. Осуществить социальные опросы и на основе анализа полученных результатов раскрыть проблемы учебного, социального и психологического характера, имеющиеся в процессе интеграции студентов в образовательную среду вуза на первых этапах обучения.
4. Определить педагогические условия процесса эффективного осуществления интеграции студентов в образовательную среду вуза и адаптации на первых этапах обучения.
5. Предложить эффективные методы, средства и формы педагогического воздействия, способствующих интеграции в образовательную среду вуза, обосновать целесообразность их применения.

Научная новизна исследования:

1. С философской, психолого-педагогической, социологической, культурологической, биологической точек зрения интерпретированы и систематизированы ключевые понятия об интеграции личности в окружающую среду.
2. Исследована проблема социально-культурной, психологической и учебной адаптации студентов в процессе интеграции в образовательную среду вуза на первых этапах обучения.
3. Спроектирована педагогическая модель интеграции студентов в образовательную среду вуза, предложены целесообразные методы, средства и формы педагогического воздействия в процессе интеграции.

4. Определены педагогические условия эффективного осуществления процесса интеграции студентов в образовательную среду вуза.

Теоретическая значимость исследования:

1. Проанализированы и систематизированы теории и концепции учебной и социально-психологической адаптации студентов к образовательной среде вуза.

2. Определены содержание, основные направления работы процесса интеграции студентов к образовательную среду вуза на первых этапах обучения, а также уровни интеграции и критерии, характеризующие их.

3. Теоретически обоснованы методы, средства и формы эффективного осуществления процесса интеграции студентов в образовательную среду вуза.

4. Обоснована целесообразность педагогической поддержки куратора в процессе интеграции студентов в образовательную среду вуза на первом этапе обучения, характеризуется его роль и функции в системе управления вуза.

Практическая значимость исследования:

1. Материалы теоретического и практического исследования процесса интеграции студентов в образовательную среду вуза могут быть полезны не только для интеграции студентов в высшие, начальные и среднепрофессиональные учебные заведения, но и в процессе социальной адаптации личности в разных социально-культурных группах и межкультурного общения.

2. Результаты исследования могут быть применены в практике взаимодействия вуз-школа, а также в процессах формирования профессиональной ориентации школьников, в переподготовке и развитии социально-культурных компетенций специалистов сферы образования.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка используемой литературы и приложений. Объем диссертации составляет 137 печатных страниц.

LILIA ZORIK VERDYAN
THE PEDAGOGICAL CONDITIONS OF STUDENTS' INTEGRATION
INTO THE EDUCATIONAL ENVIRONMENT OF HIGHER EDUCATION
INSTITUTIONS

Dissertation submitted for obtaining a degree of Candidate of Pedagogical Sciences for the specialty of 13.00.01 - Theory and History of Pedagogy.

The defence of the dissertation will be held at Yerevan State University at the session of the 065 Board of Pedagogy of the RA Supreme Certifying Commission on December 2, 2016, at 14:00 (Address: Yerevan, 0025, Abovyan str. 52a, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room 203).

SUMMARY

The relevance of the research:

Current political, economic and sociocultural changes make new demands to the higher education and some of the main challenges it is facing are not only the formation of students' professional competencies, but also their efficient integration into the educational environment of a higher education institution (henceforth HEI) and their adjustment to the fast changing life conditions.

The shift from secondary to higher education is accompanied by educational, sociocultural, psychological and other types of changes. During the first phase of studies a student does not only have to adjust to the new social environment, but has also to overcome a few challenges in the educational process. Integration and involvement in everyday activities in the new social environment are key conditions for enhancing the ability of being socially active, boosting learning progress and vitality. The contemporaneity of the research is conditioned by the necessity of designating pedagogical conditions for an efficient student integration into a HEI's educational environment during the first phase of their studies and the development of scientific-methodological approaches to supporting that process.

The aim of the research is to explore and to theoretically and practically substantiate the pedagogical conditions for implementing students' efficient integration into HEIs' educational environment.

The objectives of the research:

1. Explain core concepts related to the main problems of the research based on the analysis of philosophical and psychological-pedagogical literature as well as theories and theoretical frameworks in the areas of sociology, cultural studies and biology.
2. Draw up the pedagogical model of students' integration into the HEI's educational environment during the first phase of their studies.
3. Hold surveys and based on the data analysis find out the educational, social and psychological problems of students' integration into the HEI's educational environment during the first phase of their studies.
4. Point out the pedagogical conditions for an efficient student integration and adaptation.
5. Suggest efficient methods, means and forms contributing to integration into the HEI's educational environment as well as substantiate the appropriateness of their

application.

The scientific novelty of the research:

1. Key concepts related to an individual's integration into the environment have been explained and systematised from philosophical, psychological-pedagogical, sociological, cultural and biological perspectives.

2. The problem of students' sociocultural, psychological and educational adjustment in the process of integration into educational environment has been examined.

3. The pedagogical model of students' integration into the educational environment has been drawn up as well as appropriate methods, means and forms of pedagogical influence in the integration process have been pinpointed.

4. The pedagogical conditions for the efficient implementation of students' adjustment into the HEI's educational environment have been defined.

The theoretical value of the research:

1. Theories and theoretical frameworks related to students' educational and social-psychological adjustment to the educational environment have been analysed and systematised.

2. The content, main directions, integration levels and the criteria describing students' integration into the HEI's educational environment during the first phase of their studies have been defined.

3. Efficient methods, means and ways of implementing student integration have been theoretically substantiated.

4. The appropriateness of mentors' pedagogical support in the period of student integration has been confirmed as well as his or her role and functions in the HEI's management system have been described.

The practical value of the research:

1. Practical and theoretical research materials about students' integration into the HEI's educational environment may be useful not only for students' integration into education institutions, but also for social adjustment and intercultural communication processes.

2. The research results may be used by schools and HEIs while cooperating as well as in processes of developing pupils' professional orientation, training educational specialists and enhancing sociocultural competences.

The structure and volume of the dissertation:

The research paper consists of 137 pages. It is comprised of an introduction, three chapters, conclusions, references and appendixes.